

ԿՐՈՆԱԿԱՆ

— — —

ԱԵԹԼԵՀԵՄԻ ԾԱՂԻԿ

«Եւ բղիկոցի Դաւազան յարմատոյն Ցե-
սեայ և ելց ծաղիկ յարմատոյ անօհի:
Խսայի ԺԱ. 1.

Մեծահանդէս տօնի ծննդեան
Խորենացին է երգահան,
Որ զքնար հոգւոյն առեալ
Թռչի երթայ Երուսաղէմ,
Տեթևէ հեմի սուրբ այրին դուռ
Խսահի, երգէ զֆրկչին ծնունդ:
Եւ զիմ հոգիս, երգիւ սուրբ Հայր,
Տար ընդ հոգւոյդ ի Եեթևէ հեմ,
Ես ձայն առնում և զու երգէ
Քաջահնցիւն քո շարական,
Զոր քո մատունք բանահիւսեր.
«Խորհուրդ Մեծ և Աքանչելի,
Որ յայսմ առուր յայտնեցաւ»:

Ո՞ւմ յայտնեցաւ զարմանաց բան,
Ո՞չ իմասսնոց աշխարհիս այս
Ա, Ա հօտարած հովիւներուն:
Թողուց Աստուած Երուսաղէմ,
Թողուց տաճար Սողոմնին,
Անշուք այրին մէջ յայտնեցաւ,
Թողուց բանդէտ մեծ բարունիք,
Աստուածաշունչ զրոց նօտարը
Հապա զպիրք փարիսեցիք,
Որ պանծային յանձինս իւրեանց,



Արանչելի և մեծ խորհուրդ
Անգէտ հովուացն ծանուցաւ:
Վասն էր այսպէս կամեցաւ Հայր.
Լուր քեզ Պօղոս տայ պատասխան,
Թէ՝ զյիմարս ընտրեաց Աստուած,
Որ իմաստունս ամօթ առնէ:
Աթենական յԱրիսպագին
Հովիւ Պօղոս բանախօսեց,
Զիսաշի ճառէն և զիսաշելոյն,
Զնոյն մեռեալ և յարուցեալ,
Շնորհն Աստուծոյ երկեցաւ,
Փրկիչ եղե Ազգի մարդկան:
Դիտնոց կաձառք Աթենացւոց
Ասեն ընդ ծաղր և զարմանան.
Զի՞նչ նորալուր բան խօսի մեզ,
Եկրմանաքաղ մշակս այս:

Եթէ ասեն անհաւան միտք,
Հովիւ վկայք մեզ չեն յարգի,
Աստուած հանեց տարաշխարչէն
Խշանաւոր այն մեծ մոգեք,
Որ տեսնեն աստղ մի յԱրկելու,
Լուսասպայժառ էր իւր ծագութի:
Մի տաղասաց բան ստեղծէ,
Ի մէջ ասաղին աեսայ մի Կոյս
Եւ կուսին զիրկ մանուկ Յիսուս:
Գուշակելով Փրկչին ծնունդ
Մոգերն եկան լի հաւատով,
Երկիրապաղին Փրկչին մերյ:
Լոյս ծագեցաւ Երուսաղէմ,
Չտեսաւ անբաղդ Երուսաղէմ,
Ո՞չ ծածկեցաւ նորա աչքէն.
Ազգ հեթանոս աեսաւ հեռուստա
Երկրպագեց և հաւատաց,
Ազգ հեթանոս վկայ եղե,
Փառաւորի Փրկչին ծնունդ:

Եսայեսս կանխաձայնէր.

Յուշ առնեմ Քեզ ծառայ Յակոր,
Երբ տեսնաս դու Լուսոյն ծագութի,
Դու բուռն Հար բռնէ զյոյս,
Այդ քո փառքն է, մի տար այլում,
Որ օտար է և անձանօթ:
Ո՞չ թուլացաւ Յակորայ ձեռք,
Ազգ հեթանոս բռնեց զլոյսն,
Սոսկ փառք մնաց Յակորայ տան.

Յեր Ախենին ի աաձարին
Լոյսն ի զրկին ասաց այս բան:
Թողով զկարդ նախաերգոյս
Արդ ըսկսիմ զծնունդն սուրբ,
Ֆաղիկ ծաղկեալ Դաւթի աբնէն,
Նախասկզբէն պատմել ոճովի

Բեթլէչէմէն հեռու մի ժամ
Կոյ մի աեղի արօտավայր,
Կանաչաւալա ու ծաղկազարդ:
Անդ է արդեօք ծաղիկ զաշտաց
Եւ կամ չքնաղ շուշան հովաց,
Զոր Սողոմոն առնու ի յերգ,
Երգ փեսային և իւր հարսին:
Աւը ասեն թէ հովիւ Դաւիթ
Յեսուէ տան արածէր հօան.
Եւ այն օրէն մինչեւ այսօր
Տեղն այն կոչի հովուաց անուն
Աւը հօաներուն հովիւներուն
Մի հանգրուան է զիշերուն:
Անդէա տգէտ մեր հովիւներ
Երբ ժողովին ի միասին,
Նստեն ժղնեն սարեն ձորէն,
Չունին ոչինչ հետ քաղաքին:
Երբեմն պարծին իւրաքանչիւր
Դամփու հուժկու մեծ շներէն:
Ունակ առնուն փող ու սրինդ,
Քաջ երաժիշտ են հովիւներ,
Դիտն խօսել հետ հօաներուն,
Հրաւէր կարդան եղանական
Նստել հանգչել ու որոճալ,
Եւ երբ հնչն մեղմիկ անուշ,
Այդ նշան է լինել ի քուն:
Հովիւն էլ իւր օրօրն ունի
Խչաղիս մօք երգ օրօրոցին:

Հովիւներէն կան պատօններ,
Որ սրատես ճանաչող են,
Հազար հազար գառն ու ոչսար
Երբ խառնակին իրարու հետ,
Գառներ մայրեր յոյժ բառաջէն,
Մայրն զգառնուկ գառնուկ զմայր
Մոլոր մելոր որսնեն,
Պապոր հովիւ զիտէ զատել
Մէն մի գտննուկ տալ իւր մաքուն,
Այս բան հովուին մեծ հունարն է,
Ասեն նստե թէ հովիւներ

Դեռ չի ծնած դառնիկներուն
Ուս որոշել զիահեն փորձով
Եղ է արդեօք, եթէ որձ:

Ե՛ երջանիկ, գուք հովիւներ,
Թողէք սրբնդ և ձեր փողեր,
Զեղ աւետեաց փող ամ հնչէ:
Յանկարծ երկնուց լոյս փայլեցաւ,
Դաշտեր լեռներ լուսով լըցան,
Հոմերն ամեն վրդովեցան,
Եւ հովիւներ մնացին ապշած:
Ասին ի՞նչ է այս հրաշից բան,
Կէս զիշեր է, չէ առաւօտ,
Սրեւն չէ այս պայծառ լոյս:
Տեսան հրեշտակ մի լուսաւոր,
Չայն աւետեաց հնչէ վերուսուտ.
Աւետիս ձեզ բարի հովիւք
Փրկիչ ծնաւ ձեզ Բեթլէ՛, մէ՛,
Այս նշանակ տամ ձեզ ստոյժ,
Վաղէք, գնացէք Բեթլէ՛, մէ՛,
Մաէք այն այր, որ դուք դիսէք,
Աւր ամ աեսնաք Փրկիչ Մանուկ:
Խանձարուրին մէջ պատասած,
Այնպէս զրուած է ի մասուր:

Հովիւք դարձան հայեցան վեր,
Տեսան երկնուց գուռն բացուեր,
Լուսեղինաց ամրող դասեր
Բանեցին ողջ երկնուց երես.
Աւտառնէին և խաղային
Եւ երգեին քաղցր ձայնով.
Փառք ի բարձունա Աստուծոյ:

Ասեն հովիւք ի՞նչ է այս բան,
Զոր Տէրն մեր ցոյց տուաւ մեզ:
Ելէք երթամք ի Բեթլէ՛, մէ՛,
Շնորհաւորեմք Փրկիչն ծնունդ:
Առէք մեզ հետ մաստղ դասներ,
Տանեմք մեր ձօն Փրկիչն նուէր:
Առէք սպիտակ փափուկ բռւրգեր,
Տանենք փուոց չոր մըսուրին.
Մեր դաշտերու ծաղիկներէն
Նուշն ծաղիկ և անթատամ,
Քաղեցէք, փունջ փունջ կապէք,
Տանենք շարենք մարին բոլոր.
Մեր նոր ծաղիկ մանուկ Փրկիչն
Ծաղիկներով պատկ դնեմք:

Մի հովիւ ել այս բան յիշեց.
Ասաց, անշուշտ Փրկիչն ծնուրը
Ցոյժ աղքատ են և չքաւոր,
Որ իջեան մի չեն դաներ
Մեր Բեթլէ՛, մէ՛ քաղաքին մէջ,
Եկել դաբել են մեր այրիկ
Մուժ ու մըճու և յոյժ փոքրիկ:
Ես էլ կուղեմ մարին կթեմ
Մի պուտուկ կամ առնեմ տանեմ,
Աւտէ աղքատ ծնող մայրիկ
Նուտ շուտ ծիծ տայ մանուկ Փրկիչն:

Հովիւք հասան մարին սուրբ այր,
Տեսան իրենց մըճու մութ այր,
Համակ լուսով լցուած էր այն,
Եւ լուսոյն մէջ լուսածին Մայր:
Տեսան Փրկիչ խանձարուրով
Պատած, զրուած ի մասուրին,
Մի կողմ իշուկ մի էր կապուած,
Միւս կողմ եղնիկն էր պարարակ,
Եւ ի միջի Փրկիչ մանուկ,
Զոր Ամրակում աեսաւ հոգւով:
Մեր հովիւներ քաղաքափար.
Ողջոյն ասին, ով Տիրամայր,
Մեր հովիւներս դաշտի ծառայքս,
Պարզ միամիտ շինական եմք,
Ոչ զիր զիտեմք և ոչ կարդալ
Անրան հօտին եմք պահապան:
Չեմք ի համար մարդկան դասին,
Մարդիկ զմեզ կոչեն անրան,
Միթէ անալու մարդ է հովիւ.
Հովիւն էլ իւր շնորհն ունի,
Հայր Արքահամն էլ մէջ հովիւ էր,
Բոլոր որդիեն Յակարայ
Հովիւ էին և հօտարած,
Օրհնեալ լինի Փրկիչն ծնունդ,
Հովիւներուս յարդ բարձրացոյց.
Զի Տէր Աստուած մեր համեցաւ,
Թողուց քաղաք երուսաղէմ,
Թողուց բանդէտ մէջ բարունիք,
Հովիւներուս յայտնից իւր փառք:
Մի լուսափայլ հրեշտակ երկնուց
Մեղ աւետեց Քո սուրբ ծնունդ,
Ասաց, գնացէք ի Բեթլէ՛, մէ՛:
Տեսէք Փրկիչ ի մէջ մարին:
Ահա եկանիք, աեսանք աչքով.

Երկիրսպագեմք մեք հաւատով
Մանուկ Փրկչին և ծնող մօրդ:

Մեք ուրախ եմք և շատ ուրախ
Հովիւներուս անշուք այս այր
Ասպնջական եղաւ Քեզ, Մայր:
Մեք ի՞նչ ընծայ տամք մեք Փրկչին,
Չունիմք ոսկի և թանդ բաներ,
Գաշտի վաստակն է մեք ընծան:

Ահա բերենք մեք գառնուկներ
Մատաղացու Հայր Յովսէփին,
Բերենք վասիուկ գառանց բուրդեր,
Փռոց արա խեղճ մանկիլիդ,
Որ գրեր ես ի մէջ մարբին,
Վեր չոր գետնին և չոր յարդին:

Դու ձեռաշխաւ զիման, Մայրիկ
Մեր բուրդերէն մանէ հիւսէ
Անկարանի մի պատմուման,
Տաքուկ տաքուկ հագնէ մանկիկ:

Մեր ծաղկաբեր հովիւներէն,
Մաղիկներու փունջեր բերենք,
Կիր ի մոռւր խանձարուրին,
Ծաղիկ ծաղիկն քո գարդարանք:
Բերենք սափոր մի մաքու կաթ,
Անուշ արա, առաս առաս:
Քանի մնաս մեր այրին հիւր,
Մենք տի բերենք քեզ կաթ մածուն,
Դու միշտ կաթ տուր երեխային,
Որ շուտ աճի և զօրանայ,
Եւ մեր Փրկիչ, զոր դու ծնար,
Ողջ աշխարհիս հովիւ լինի:
Մենք հովիւներս լեռնացի եմք,
Պարտաւոր եմք հօտեր պահէլ,
Գիշեր ցորեկ հսկել հօպին,
Գուցէ չկարեմք կրկին անգամ
Գալ համբուրել մեր Փրկչին ոտք:
Թոյլ տուր, ով Մայր, վերջին անդամ
Մօտիմք մարբին և համբուրեմք
Սուրբ խանձարուր մեր Փրկչին:
Օխու ի՞նչ անուշ հոտ է բուրում,
Մի երկնարոյս ծաղիկ է Սա.
Մեր դաշտերուն ծաղիկ չէ այս,
Մեր ծաղիկներ ծաղիկն դարուն,
Երբ գայ աշուն թռումին թափեն.
Իսկ այս ծաղիկ անմժառամ է,
Հոտով գունով անմահ է:

Մեսս բարով, Մայր երջանիկ,
Աստուած պահէ որդւոյդ արեւ:

Հարցէք թէ ի՞նչ արաւ Յովսէփ.
Հովիւների բերած գառներ,
Բոլոր մօրթեց մատաղ արեց,
Բեթլէհէմի կարօտ մանկատին
Երբ լսեցին թէ մատաղ կոյ,
Ողջ թափեցան սուրբ այրին դուռ,
Կերան կուշտ կուշտ գտանց մատաղ:
Հարցին՝ ո՞ւր է մանուկ Յիսուս.
Մեք համբուրեմք նորա սուրբ ոսք,
Որ ի շնորհս իւր ծննդեան
Քաղցած մանկատին կերաւ մատաղ:
Շնորհակալ ենք, Հայր Յովսէփ,
Աստուած պահէ քո երեխէն,
Նա մեծանայ և զօրանայ
Խշան լինի Բեթլէհէմին:

Ես ասս յիշեմ Երուսաղէմ,
Զկարեմ մոռնալ Երուսաղէմ:
Յիշեմ սուրբ ծնունդ և Բեթլէհէմ:
Ո՛վ միարանք սուրբ Սաղիմայ,
Զոյգ Յակոբանց մեծ Աթոռոյն,
Որ ի տօնի սուրբ ծննդեան,
Երթայր խմով ի Բեթլէհէմ,
Տօն կատարէք մեծահանգէս,
Եւ մեծամեծ կաթսաներով
Դուք պատրաստէք զհարիսէն.
Ողջ ժողովուրդ Բեթլէհէմի
Ուտեն կուշտ կուշտ զհարիսէն.
Դուք յիշեցէք զիս մի մոռնաք.
Փոքրիկ պուտիկի մի հարիսայ
Տուէք հրեշտակին Ամբակումայ,
Առնէ բերէ ի յԱյրարատ,
Ուր տքնում է Հայոց Հայրիկ:
Ես կարօտ եմ և յոյժ կարօտ
Բեթլէհէմի հարիսային:
Հայր Յովսէփայ մատաղի բան
Դուք փոխեցէք զհարիսա,
Պիստ պահէցէք զուք այդ աւանդ
Ի յիշատակ Փրկչի ծննդեան:

